ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ arminenoy@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

"02" մայիսի 2012 թվականի N 77-Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 23.04.2012 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Իրավական ակտերի մասին օրենքի 8-րդ գլխի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Նոյեմբերյանի քաղաքապետի 23.04.2012 թ. թիվ 69-Ա որոշման մեջ կատարել լրացում. Որոշման առաջին կետում "ճանաչել Սաշա Մեսրոպի Մամյանից հետո կարդալ Շուշան Սաշայի Մամյանի /ծնված 19.06.1949 թ./, Մեսրոպ Սաշայի Մամյանի /ծնված 24.10.1971թ./ , Սոնա Սաշայի Մամյանի /ծնված 12.06.1974 թ./ և Մուշեղ Սաշայի Մամյանի /ծնված 12.05.1979 թ./ սեփականության իրավունքը:

2. Նախկին որոշման մնացած շարադրանքը թողնել ուժի մեջ:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ/Տ ԽԱՉԻԿ ԳԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4 հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ arminenoy@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

"02" մայիսի 2012 թվականի N 78 – Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով "Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ բուն դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին" 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ որոշում եմ.*

1. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանին տալ հասցե և գրանցել Նոյեմբերյան քաղաքի Զ. Անդրանիկի փողոց թիվ 8 շենք բնակարան 26 հասցեում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ԽԱՉԻԿ ԳԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noyemberyanhamaynq@rambler.ru

# *ՈՐՈՇՈՒՄ*

*"02" մայիսի 2012 թվականի N 79- Ա*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղ.օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին » Հայաստանի Հանրապետության կառավորության 18.05.2006 թ. թիվ 912-Ն որոշման 33,34,35 հոդվածներով և քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Մ. Ամիրաղյանի զեկուցագիրը *որոշում եմ.*

1. Նոյեմբերյան քաղաքի Կամոյի 7/1 հասցեում Սասուն Մարտիկի Մամյանի կողմից իրականացված և համայնքային սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցը /կառուցված 2007 թ./ 54.97 քմ շինության մակերեսով և 65.9 քմ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության զբաղեցրած հողատարածքով օրինականացնել որպես ավտոտնակ /ծածկագիր 11-004-0048-0038/ :

2. Օրինականացված կառույցի նկատմամբ պետական գրանցում ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում տվյալ կառույցի օրինականացման համար սահմանված գներով, իսկ զբաղեցրած հողամասը կադաստրային արժեքով ձեռք բերելու համար կառույցն իրականացրած անձին՝ Սասուն Մամյանին անել գրավոր առաջարկություն:

3. Սահմանել, որ նախապատվության իրավունքով կառույցը գնելու առաջարկը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկը ընդունելու դեպքում Սասուն Մամյանը Նոյեմբերյանի համայնքային բյուջե պետք է վճարի 113846 ՀՀ դրամ, որից

   ա/ կառույցի օրինականացման վճար -60467 ՀՀ դրամ,

   բ/ 65.9 քմ հողամասի կադաստրային արժեք – 53379 ՀՀ դրամ /1քմ – 810 դրամ/:

4. Սույն որոշմամբ սահմանված վճարները վճարելուց հետո Սասուն Մամյանի հետ կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ԽԱՉԻԿ ԳԻՇՅԱՆ